Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Թեմա՝	Օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպումը տարբերակված ուսուցում իրականացնելիս
Վերապատրաստող, մենթոր՝	Նարինե Բաղդասարյան
Կատարող՝	Ն. Աղաբաբյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

1. Ներածություն 3

2. Օժտված երեխաների առանձնահատկությունները---------- 5

3. Ուսուցչի և ծնողի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների հետ----------12

4. Օժտված երեխաների հետ անհատական աշխատանք իրականացնելու ձևերն ու մեթոդները ----------13

5. Հետազոտություն----------14

6. Եզրակացություն----------15

7. Առաջարկություն----------17

8. Օգտագործված գրականություն ----------18

Ներածություն

Դեռևս մարդկության պատմության զարգացման ամենահին ժամանակներից բոլոր այն մարդիկ,ովքեր ունեցել են խնդիրներ՝ կապված վարքի հետ՝ մտավոր հետամնացություն, բացառիկ ընդունակություն, այսինքն՝ դրական կամ բացասական, համարվում են շեղումներ:Դրական շեղում է համարվում օժտվածությունը:

Ինչպես հոգեբանությունը, որը կայացման երկարատև ուղի է անցել, այնպես էլ օժտվածության, տաղանդի, հանճարեղության ֆենոմենները՝ իրենց ուրույն դրսևորումներով, մարդու հետ երկար ճանապարհ են անցել և XX դարում դարձել գիտական հետազոտության առարկա:

Օժտվածության հիմնախնդիրը միջգիտակարգային մոտեցում է պահանջում՝ առնչվելով կրթության, բժշկության, մանկավարժության, սոցիոլոգիայի, ինչպես նաև հոգեբանության (անձի, տարիքային, բժշկական և այլն) հետ:

Ծվեյցարացի հոգեբույժ, անալիտիկ հոգեբանության հիմնադիր Կառլ Գուստավ Յունգը գրում.<< Օժտված մարդիկ կենսաբանական տեսանկյունից տարբերվում են միջին մակարդակ ունեցող մարդկանցից: Չնայած բարձր ընդունակություններին՝ մարդկության ծառի ամենագեղեցիկ, սակայն հաճախ վտանգավոր պտուղներից են. դրանք կախված են բարակ ճյուղերից, որոնք հեշտությամբ կարող են պոկվել>>:[1]

Տեղեկատվական այս նոր դարաշրջանում կարևոր ու արդիական է օժտված երեխաների մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտումն ու ճիշտ զարգացումը, քանի որ այդպիսի երեխաներն են մշակույթի, տնտեսության, քաղաքակրթության շարժիչ ուժը: Մերօրյա իրականությունը էապես զգում է խելացի, տաղանդավոր, ինտելեկտուալ երեխաների կարիքը:

Հետազոտության նպատակն է՝

•Ուսումնասիրել շնորհալի երեխաների ֆենոմենը հոգեբանական և մանկավարժական տեսանկյունից:

•Ճիշտ կազմակերպել օժտված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացը :

• Զարգացնել և կատարելագործել օժտվածության դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև անհատական աշխատանքի ձևերն ու մեթոդները:

Խնդիրները՝

•Բացահայտել արտակարգ ընդունակություններով օժտված երեխաների

•Նպաստել երեխաների ընդունակությունների պահպանմանն ու զարգացմանը

•Ստեղծել ուսումնանյութական բազա

•Ստեղծել նպաստավոր պայմաններ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար:

Հետազոտման մեթոդները՝

Առաջադրված խնդիրները լուծելու և մեր առջև դրված նպատակին հասնելու համար օգտագործվել է

համապատասխան գիտական գրականություն, ուսումնասիրման ընթացքում կիրառվել են ընդհանրացման, վերլուծման մեթոդներ:

Օժտված երեխաների հետ աշխատանքի առանձնահատկությունները

Ցանկացած մարդ ունի բնածին առանձնահատկություններ, սակայն օժտվածությունը մարդու առանձնահատկությունների ամբողջություն է, որի շնորհիվ զարգանում են ընդունակությունները:

Օժտվածության վերաբերյալ հիմնարար ուսումնասիրություններ իրականացվել է դիֆերենցիալ հոգեբանության մեջ՝ օժտվածությունը սահմանելով առավելապես ինտելեկտուալ ոլորտի դրսևորում:

Չ.Սպիրմենը օժտվածություն հիմնական նշան էր համարում մտավոր էներգիայի բարձր գործոնը:

Նրա աշխատանքների արդյունքում սկիզբ դրվեց <<Ընդհանուր ինտելեկտի գործոն>> հասկացության զարգացմանը, որը պայմանավորված էր ժառանգական գործոններով, գնահատվում էր թեստերով և կանխատեսում էր աշակերտների բարեհաջող զարգացումը, հետագայում նաև մասնագիտական արդյունավետությունը: Սպիրմենի առաջարկած մոդելը ակտուալ է մինչև օրս: Հետագայում օժտվածություն հասկացությունը հարստանում է նոր իմաստներով:

Օժտվածության ուսումնասիության հիմնական ֆունկցիաներն են՝ ուշադրություն, կամք, ընդունակություն, մտապահում, ասոցիատիվ գործոններ՝ իմաստավորում, համակցված կարողություններ, երևակայություն, դիտողականություն, հնարամտություն:

1972 թվականին ԱՄՆ-ի կրթության հանձնաժողովի կողմից շնորհալիության սահմանումը, չնայած քննադատություններին, կիրառվում է մինչ օրս. <<Օժտված և տաղանդավոր համարվում են այն երեխաները, որոնք դուրս են բերվում փորձառու մասնագետների կողմից և շնորհիվ բարձր ընդունակությունների ունեն մեծ ձեռքբերումների հասնելու ներուժ: Այդպիսի երեխաները մասնագիտացված ծրագրերի կարիք ունեն, որպեսզի կարողանան ռեալիզացնել իրենց հնարավորությունները>>:

Հոգեբանության մեջ հանդիպում է նաև հետևյալ պայմանական դասակարգումը՝

ընդունակություններ, օժտվածություն, տաղանդ, հանճարեղություն: Ընդունակությունները սերտորեն կապված են օժտվածության հետ և հանդես են գալիս որպես վերջինիս զարգացման հիմք:

Տաղանդը բացառիկ ընդունակությունն են, որևէ կոնկրետ գործունեության մեջ օժտվածության ամենաբարձր մակարդակը: Հանճարեղությունը տաղանդի զարգացման բարձրագույն մակարդակն է՝ կապված նորի ստեղծման հետ, որի դեպքում անձի ստեղծագործական արդյունքները բացառիկ նշանակություն են ստանում:

Օժտվածությունը համընդհանուր բնույթ չի կրում: Երբ փորձում ենք մանրամասն վերլուծել և մեկնաբանել այն, ապա անկասկած պետք է պատասխանենք այս հարցերին.

•Ի՞նչ կերպ է օժտվածությունն արտահայտվում դեռևս վաղ տարիքում:

•Ո՞ր նախադրյալներն են ստիպում ծնողին, մանկավարժին եզրակացություն անել տվյալ երեխայի օժտվածության մասին:

Այս երևույթը լուսաբանող հետազոտության բուն նպատակն է առաջին հերթին օժտվածության բացահայտումը: Դա էլ իր հերթին հնարավորություն է տալիս դիտարկել օժտված երեխային հատուկ բոլոր առանձնահատկությունները, որոնք իրենց ուրույն դրսևորումներն են գտնում վերջինիս վարքում, մտածելակերպում և անձի ընդհանուր գործունեության մեջ: Հայտնի է, որ ժամանակակից կրթությունը միտված է անհատական մոտեցման զարգացմանը կրթական հաստատություններում, հատկապես երբ խոսքը վերաբերում է հատուկ կրթության կարիքներով երեխաներին: Օժտված երեխաները ևս ներառվում են վերջիններիս ցանկում:

Ինչպես գիտության, այնպես էլ հասարակության առջև ծառացած այժմեական հիմնախնդիրներից մեկն օժտվածություն երևույթն է: Բանն այն է, որ բնական ռեսուրսներով գրեթե աչքի չընկնող մեր երկրում դժվար է զարգացման հեռանկարներ կանխատեսել մոտ ապագայում: Ուստի պետք է ոչ միայն հիշել ամենակարևոր հարստության՝ ստեղծագործական ներուժի մասին, այլև նպաստել դրա բացահայտմանը, դրսևորմանն ու զարգացմանը:

Չնայած խնդրի արդիականությանը՝ այն բավարար չափով ուսումնասիրված չէ ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Օժտվածության հիմնախնդիրն էլ իր հերթին առաջադրում է հարակից և փոխկապակցված խնդիրներ, որոնք հետազոտման, լուսաբանման կարիք

ունեն և կարևոր են ինչպես անձի, այնպես էլ ընդունակությունների զարգացման առումով:

Օժտված երեխաներին առավել հատուկ դրսևորվող առանձնահատկություններից է խոսքի վաղ զարգացումը, որն անմիջականորեն ուղեկցվում է հարուստ բառապաշարի ձևավորմամբ: Ինչպես նաև նրանց կողմից ցուցաբերվող ծայրահեղ, երբեմն նույնիսկ զարմանք հարուցող ուշադրությունը գրեթե ամեն ինչի նկատմամբ: Սա փաստում է այն մասին, որ նրանք ծայրաստիճան հետաքրքրասեր են ու նրբանկատ:Նշեմ մի կարևոր հանգամանք ևս, որ օժտված երեխան աչքի է ընկնում հիշողության մեծ ծավալով և դժվար է շփոթեցնել կամ փորձել ապակողմնորոշել նրան:

Օժտված երեխաների առանձնահատկություններից մեկ էլ նրանց զգայունությունն է: Իմ հետազոտության ընթացքում առիթ եմ ունեցել հետևելու օժտվածի վարքին: Օժտված երեխան արագ է արձագանքում իրեն շրջապատող երևույթներին: Երբեմն կարող է նկատել և ընկալել այնպիսի չնչին, աննկատ թվացող երևույթներ, որոնց մասին սովորական երեխան նույնիսկ չի էլ մտածի: Օժտված երեխայի այդպիսի զգայությունը առաջին հերթին պայմանավորված է իր՝ չափից ավելի տպավորվող և ընկալունակ լինելու հատկությամբ:

Օժտված երեխաների հոգեբանական առանձնահատկություններից թերևս ամենաընդգծվածը նրանց վառ և պատկերավոր երևակայությունն է, որի շնորհիվ օժտված երեխան իր հասակակիցներից տարբերվում է ստեղծագործելու, բազում հետաքրքիր պատմություններ հորինելու, ամենատարբեր իրավիճակներում առանձնահատուկ ու ինքնատիպ լուծումներ գտնելու հիանալի տաղանդով:

Օժտված երեխաների մյուս առանձնահատկությունը առնչվում է նրանց խելացիությանը և մտքի ճկունությանը:

Օժտված երեխան ձգտում է ընդգծել իր ընդունակությունն ու արտասովոր հնարավորությունները և մշտապես մրցակցում է հասակակիցներ հետ ՝ ջանալով ամեն ինչում լինել առաջինը: Այդ է պատճառը, որ օժտված երեխաների մեծ մասը գրեթե միշտ ու ամենուրեք հանդես է գալիս առաջնորդի դերում:

Երեխան կարող է օժտված լինել ստորև բերված ոլորտներից մեկում կամ մի քանիսում `գեղարվեստական

- ստեղծագործական
- ինտելեկտուալ
- առաջնորդային
- ակադեմիական՝ լեզուներ, մաթեմատիկա կամ բնական գիտություններ

Կարևոր է հասկանալ, որ օժտված երեխաները պարզապես խելացի չեն: Ընդունակ երեխաները խելացի են, իսկ օժտված երեխաները՝ գյուտարար, հայտնագործող:

Պատմության մեծագույն նորարարները՝ Լեոնարդո դա Վինչին, Նիկոլա Տեսլան, Բելլը, Թոմաս Էդիսոնը, Բիլ Գեյթսը, Սթիվ Ջոբսը, օժտված երեխաներ են եղել: Պետք է նշել, որ նրանցից ոչ բոլորը կկարողանային պարծենալ դպրոցի բարձր գնահատականներով:

Ոչ ստանդարտ մտածողությունը և նորարարության հանդեպ ձգտումը այն պատճառներն են, որոնք այլընտրանքային կրթական միջավայրը գրավիչ են դարձնում օժտված երեխաների համար:

Ահա օժտված երեխաների 15 նշանները:

1. Նրանք խոսում են ուսուցիչների պես

Օժտված երեխաները գիտելիքներն ավելի արագ են յուրացնում, քան միջին վիճակագրական երեխաները: Լեզվական հմտություններ յուրացնելը նույնպես նրանց հեշտ է տրվում: Օժտված երեխաները լայն բառապաշար ունեն և կարող են իրենց խոսքում օգտագործել բարդ նախադասություններ:

2. Նրանք նկատում են հաջորդականությունները

Հաջորդականությունների բացահայտման հմտությունը բավականին հազվադեպ է զարգացած փոքր երեխաների մոտ, եթե ,իհարկե, երեխան օժտված չէ:

3. Նրանք շատ են կարդում

Օժտված երեխաները շատ հետաքրքրասեր են: Իրենց հետաքրքրասիրությունը բավարարելու համար նրանք պետք է կարդան իրենց ձեռքն ընկած յուրաքանչյուր գիրք: Այս առանձնահատկությունն առավել վառ է արտահայտվում, եթե երեխային ինչ-որ բան խիստ դուր է գալիս:

4. Նրանք շատ տաղանդավոր են

Օժտվածությունը ականավոր տաղանդը նկարագրելու ևս մեկ բառ է: Որոշ երեխաներ ի բնե տաղանդավոր են սպորտում, գիտության կամ արվեստների բնագավառում: Վառ արտահայտված տաղանդը օժտված երեխայի ակնհայտ նշան է:

5. Նրանք գերադասում են մեծերի ու իրենցից տարիքով ավագ երեխաների ընկերակցությունը

Օժտված երեխաների համար հետաքրքիր չէ շփվել իրենց հասակակիցների հետ, քանի որ նրանց մտավոր մակարդակը գերազանցում է նրանց գիտելիքների պաշարին: Նրանք իրենց հասակակիցներին չեն հասկանում, կամ էլ նրանց համար հետաքրքիր չէ շփվել իրենց տարեկիցների հետ: Դրա համար էլ նրանք կփորձեն շփվել տարիքով ավելի մեծ երեխաների, իրենց ուսուցիչների ու մեծահասակների հետ:

6. Նրանք շատ կենտրոնացած են

Օժտված երեխաների մեծ մասը կարողանում է կենտրոնանալ այն ամենի վրա, ինչն իրենց հետաքրքրում է:

7. Նրանք իրենց տարիքից ավելի հասուն են

Օժտված երեխան կարող է նաև բարձր զարգացած էմոցիոնալ ինտելեկտ ունենալ: Եթե երեխան օժտված է, նրա համար հաճելի չեն իր հասակակիցների չարաճճիությունները: Օժտված երեխաները սովորաբար հակված չեն նման վարքագիծ ցուցաբերել:

8. Նրանք ինքնատիպ են

Օժտված երեխաները կարողանում են նաև խնդիրներ լուծել: Այդպիսի երեխաները ոչ միայն այլ կերպ են մոտենում ամենօրյա խնդիրների լուծմանը, այլև կարող են մտածել ինչ-որ բան բարելավելու եղանակ:

9. Նրանք առաջնորդներ են

Իրենց հասունության, խնդիրներ լուծելու կարողության, ինչպես նաև ոչ ստանդարտ մտածողության շնորհիվ օժտված երեխաները շատ լավ առաջնորդներ են դառնում, հատկապես, եթե լինում է նպաստավոր միջավայր:

10. Նրանց պետք չէ ցույց տալ ճիշտ ուղղություն

Մինչ այլ երեխաների պետք է, որ իրենց ծնողները կամ ուսուցիչներն ասեն, թե ինչպես պետք է ճիշտ վարվել, օժտված երեխաները միանգամից

անցնում են գործի ու հետո նոր հարցեր տալիս: Կամ առհասարակ հարցեր չեն տալիս, եթե կարողանում են ինքնուրույն ամեն բան հաղթահարել:

11. Նրանք եռանդով լի են

Օժտված երեխաները միշտ շարժման մեջ են հավանաբար այն պատճառով, որ նրանց ուղեղն անընդհատ աշխատում է: Խելացի և օժտված երեխաները հաճախ շատ արագ են խոսում: Պատճառն այն է, որ նրանք փորձում են այնպես անել, որ բառերը հասնեն մտքերի հետևից, սակայն դա նրանց այնքան էլ չի հաջողվում:

12. Նրանց պետք է միայնության մեջ ժամանակ անցկացնել

Ինչպես և երեխաների մեծ մասին, օժտվածներին նույնպես դուր է գալիս այլ մարդկանց հետ ժամանակ անցկացնել: Այնուամենայնիվ միայնությունը նրանց թույլ է տալիս իրենց մտքերի հետ միայնակ մնալ ու զարգացնել սեփական կրեատիվությունը: Օժտված երեխաներին դուր է գալիս միայնության մեջ կարդալ, գրել ու նկարել:

13. Նրանք սիրում են բնությունը

Որոշ օժտված երեխաներ, հատկապես նրանք, ում մոտ շատ բարձր են զարգացած ստեղծագործական ունակությունները, սիրում են գեղեցիկ տեսարաններն ու բնության ձայները: Նրանց հետաքրքրասիրությունն ամենից առաջ արտահայտվում է բնության գրկում:

14. Նրանց երբեմն չի հաջողվում իրացնել իրենց պոտենցիալը

Խելացի և օժտված երեխաները իրենց գրեթե ողջ մտավոր էներգիան ծախսում են իրենց դուր եկած բաների վրա: Հաճախ ստացվում է այնպես, որ նրանք հաջողում են մի ոլորտում ու անհաջողության մատնվում մյուսներում: Օժտված երեխաները երբեմն չեն կարողանում իրացնել իրենց բոլոր հնարավորությունները անուշադրության, թափթփվածության, ֆրուստրացիայի կամ սովորական ձանձրույթի պատճառով:

15. Նրանց համար հետաքրքիր է սովորել

Օժտված երեխաներին այնքան է դուր գալիս սովորելը, որ դա հոբբի է դառնում: Իրենց մտավոր ունակությունների ու գիտելիքների նկատմամբ ձգտման շնորհիվ երեխան կարող է նույնիսկ կիսել իր հասակակիցների որոշակի հետաքրքրություններ[10]:

Դպրոցում երեխաների ընդունակությունների, պոտենցյալ հնարավորությունների բացահայտումը, զարգացումը կրթության կարևոր հիմնախնդիրներից է :

Օժտված երեխաների կրթության կազմակերպումը պետք է սկսել հենց բացահայտումից ու զարգացումից, քանի որ դրա շնորհիվ մենք գծում ենք այն կրթական ուղին և մոտեցումները, որոնք պետք է կիրառենք:

Օժտվածության բացահայտման մեթոդները բազմազան են և լրացվում ու թարմացվում են ժամանակին համընթաց:

Օժտված երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է իրականացնել տարբեր գործառույթներ ՝ հետազոտող, ախտորոշող, կանխատեսող, խորհրդատվական և այլնէ նպատակ ունենալով նրանց ուղեկցել կյանքի դժվարին ու բարդ իրավիճակներում:

Օժտված երեխաների հոտ աշխատանքում կիրառվում են հաղորդակցական _ տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնց միջոցով կարելի է փոխազդեցություններ և փոխներգործություններ, նոր վարքագծեր, ընկալել, գնահատել և մեկնաբանել մեկը մյուսի վարքագիծը, լուծել հուզող խնդիրներ, բավարարել հոգևոր և նյութական պահանջմունքները, զարգացնել ինքնաճանաչողությունը: Կիրառվում են նաև կազմակերպական տեխնոլոգիաներ, իրականացվում է դաստիարակչական խորհրդատվություն:

Անհրաժեշտ է կազմել երեխայի տաղանդի զարգացման ծրագիր, որը նախատեսում է թեմաների բազմազանություն և գործնական ուսուցում: Այն հնարավորություն կտա որոշելու երեխայի ուժեղ և թույլ կողմերը, աջակցելու նրա հետաքրքրություններին:

Ուսուցչի և ծնողի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների հետ

Օժտվածության բացահայտման և զարգացման գործընթացում մեծ նշանակություն ունի ծնողի աջակցությունն ու ճիշտ դիրքորոշումը:

Ծնողներից տեղեկատվություն ստանալու համար հաճախ օգտագործում են անկետավորումը, որը կարող է ներառել երեխայի հետքրքրությունների ոլորտը, ֆիզիկական զարգացումը, ճանաչողական ակտիվությունը, ընդունակությունները, անձնային առանձնահատկությունները: Երեխայի շնորհալիության ուսումնասիրման աշխատանքները նպատակաուղղված են օժտված երեխայի ունակությունների բացահայտմանը և այնուհետև նրանց ունեցած հսկայական ներուժի փոխակերպմանը ստեղծագործական աշխատանքի , ստեղծագործական միջավայրի, երեխայի անձի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, նրանց անհրաժեշտ տարբեր տեսակի օգնության և աջակցության ցուցաբերմանը:

Հասարակությանը, մանկավաժին և ծնողին կարևոր է տաղանդավոր երեխայի հետ հաստատել ճիշտ հարաբերություններ և հիշել, որ նրան անհրաժեշտ է կրթել, սովորեցնել սիրել աշխատանքը, ինքնուրույն որոշումներ ընդունելու :

Կրթական հաստատություններում ուսուցիչների, ընտանիքում ծնողների անտեղյակությունը կարող է բացասական իմաստով վճռորոշ լինել օժտված երեխայի ապագայի համար: Արտաքին աշխարհի ներգործությունը ևս անխուսափելի է, չնայած ինտելեկտուալ կարողությունները ժառանգական հիմք ունեն, սակայն սոցիալական միջավայրի ազդեցությունը բացառել չենք կարող: Սոցիալական բոլոր օղակները, որոնք առնչվում են օժտված երեխայի հետ, պետք է քննարկվեն մանրամասն, այսինքն՝ և' ուսուցիչները, և' ծնողները մեծ պատասխանատվություն են կրում օժտված երեխայի զարգացման համար: Ուստի ուսուցիչ_ ծնող ճիշտ և գրագետ համագործակցությունը կարող է երեխայի առաջընթացի և հետագա զարգացման համար մեծ նախապայման հանդիսանալ:

Հետազոտություն

Տաղանդավոր երեխաների ոչ միօրինակ վարքն արտահայտվում է տրամադրության փոփոխմամբ, զրուցակցին կարող են ընդհատել, ցուցադրել

սեփական գիտելիքները, միշտ աշխատում են հաստատել իրենց ճշմարտացիությունը: Նրանք գիտեն՝ ինչ է բարությունը, ճշմարտությունը և գթասրտությունը:

Օժտված երեխաների շնորհալիության շուրջ ուսումնասիրությունները կատարվել են Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցում՝ 2_րդ դասարանում:

Դասարանում կան այնպիսի աշակերտներ, որոնք իրենց արագ աշխատանքով, տրամաբանությամբ, որոշակի հմտություններով և ուրույն վարքագծով աչքի են ընկնում, որոնց նկատմամբ ցուցաբերում եմ սովորականից մի փոքր ավելի ուշադրություն: Կարծում եմ՝ խնդիրը կիսով չափ լուծել եմ, քանի որ նկատել եմ երեխաների շնորհքը, այսինքն՝ հասկացել եմ և արժանվույն գնահատել նրանց առանձնահատկությունները: Փորձել եմ չվնասել նրանց հուզական ներաշխարհը, աջակցել և զարգացրել եմ երեխաների ունեցած ընդունակությունները:

Ողջունել եմ և շարունակում եմ ողջունել այդ երեխաների ունեցած ցանկացած հաջողություն, որը իրենց հաճույք և ուրախություն է պարգևում:

Տվյալ երեխաները ունեն մաթեմատիկական բարձր ընդունակություններ, տրամաբանությունը զարգացած է: Արագ են կողմնորոշվում մաթեմատիկական խնդիրները լուծելիս: Հաճախ խախտում են դասարանի կարգապահությունը: Մաթեմատիկայի դասին առաջադրանքը վայրկենապես կատարելով՝ տեղում անհանգիստ շարժումներ են անում, ձանձրանում են: Այդ պարագայում երեխաներին նոր առաջադրանք եմ տալիս, որպեսզի նրանք աշխատեն, զբաղվեն՝ չխանգարելով մյուսներին: Նրանցից մեկը նույնիսկ ավարտել է 2_րդ դասարանի համար նախատեսված խնդրագրքի խնդիրները, այժմ աշխատում է 3_րդ դասարանի խնդրագրքով: Հաճախ եմ նրանց համար կազմում հետաքրքիր տրամաբանական վարժություններ `գլուխկոտրուկներ, նկարելուկներ և հետաքրքրաշարժ խնդիրներ, ռեբուսներ:

Օրինակ





Նկ.1[11]

Նկ.2[11]

Ն





Մաթեմատիկա 2 Նկ.4

Մաթմատիկա 2





Նկ. 5 [11]

Նկ.6[11]

Հաճախ սիրում են նստել մենակ, շարքի վերջում՝ մեկնաբանելով, որ իրենց խանգարում են մյուս աշակերտները:

Սովորողներից մեկը օժտված է նաև նկարելու շնորհով: Գեղեցիկ և պատկերավոր նկարում է: Ցանկացած աշխատանք կատարում է հանգիստ, կոկիկ,գեղեցիկ և յուրօրինակ:



Եզրակացություն

Ելնելով դպրոցական հաստատություններում շնորհալի երեխաների հայտնաբերման նպատակով տարվող աշխատանքներից՝

առաջարկվում է կիրառել նման երեխաների ունակությունների հետագա զարգացման հատուկ ծրագիր.

1.Դպրոցական հաստատությունների ուսուցիչները պետք է ունենան մանկավարժական հարուստ գիտելիքներ և փորձ, որպեսզի տեսնեն շնորհալիության հիմքերը երեխաների մեջ:

2. Նման երեխաների դաստիարակության և զարգացման գործում նպատակահարմար է համագործակցել նաև այլ մասնագետների հետ:

3. Հետևողական, տքնաջան աշխատանք պետք է կատարել շնորհալի երեխայի ծնողների հետ, քանի որ ընտանիքում երեխաները ստանում են հսկայական աջակցություն, ուշադրություն:

4. Յուրաքանչյուր շնորհալի երեխայի համար անհրաժեշտ է մշակել անհատական ծրագիր, այդ ծրագրում ընդգրկել դպրոցական հաստատության որոշ մասնագետների, այսինքն՝ անհարժեշտ է այդ մասնագետների միասնական աշխատանքը և մշտական ներգրավվածությունը:

5. Երբեք չպետք է առանձնացնել օժտված երեխաներին այլ երեխաների ներկայությամբ:

6. Չպետք է երեխային ծանրաբեռնել, քանի որ ուսուցչի նպատակն է նրբորեն և աննկատ զարգացնել նրա տաղանդը:

7. Ամեն կերպ աջակցել և խրախուսել շնորհալի երեխայի նոր գաղափարները, նոր մտքերը և օգնել նրան իրականացնելու դրանք:

Այսպիսով, օժտվածության դրսևորման համար անհրաժեշտ է շրջապատող միջավայրի հոգածությունը, ինչը հնարավոր է իրականացնել այն դեպքում, եթե երեխա, ծնող, ուսուցիչ, պետություն համագործակցությունը ամուր հիմքերի վրա դրված լինի:

ՈՒսումնասիրելով օժտված երեխաների հետ տարվող աշխատանքների բնույթն ու բովանդակությունը՝ մենք հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Տաղանդավոր երեխաների բացահայտման, ուսուցման և զարգացման գործընթացը ժամանակակից ազգային կրթության կարևորագույն խնդիրներից է:

Ներքին կրթական համակարգում վերջին տասնամյակում տեղի ունեցած վերափոխումները, փոխել են վերաբերմունքը արտասովոր կարողություններ ցուցաբերող երեխաների նկատմամբ:

Հայտնվել են կրթական հաստատություններ և ծրագրեր, որոնց հիմնական նպատակն է բացահայտել, սովորեցնել և զարգացնել շնորհալի երեխաներին:

2. Օժտված երեխաները համեմատաբար սահմանափակ թիվ են կազմում, ինչն ապացուցում է, որ օժտվածությունը հաճախ չի դրսևորվում ուսումնական գործընթացում, քանի որ ենթադրում է ինքնատիպություն, յուրօրինակություն, նորը ասելու համարձակություն:

3. Օժտված երեխաները միշտ չէ, որ նկատվում ու բացահայտվում են ուսուցիչների կողմից՝ պայմանավորված դրա մասին սխալ պատկերացում ունենալու հանգամանքով: Օժտվածությունը նույնացնում են ուսման առաջադիմության հետ:

Առաջարկություն

Օժտված երեխաների կրթությունն ու դաստիակությունը ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել առանձին դասարաններ և մշակել ուսումնական հատուկ ծրագրեր և մեթոդներ: Օժտված երեխաների ուսման և դաստիարակության հարցերը ճիշտ կազմակերպելու խնդիրներն առանձին և երկարատև, մանրամասն հետազոտություն են պահանջում: Ես ուրախ եմ, որ մեր երկրում մեծ հոգատարությամբ են լցված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ: Կցանկանայի ամենամեծ ուշադրությամբ և հոգատարությամբ շրջապատված լինեն օժտվածություն ունեցող երեխաները, լինեն պետության հոգածության և հսկողության տակ, որովհետև նրանք են մեր թռիչքի թևերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Մ. , « Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա»,Երևան, 2017,

2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ գնահատում, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, 2003

3. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ բուհերի համար,Երևան, 1997

4. Պետրովսկու խմբագրությամբ՝ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1977,

5. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «Կրթության մասին» ՀՀօրենքը,1999, կետ 18

6. Հոգեբանությունը և կյանքը, «Զանգակ» հրատարակչություն, Երևան,2011,

7. Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, ԿԱԻ հրատարակչություն, Երևան, 2017

8. Պողոսյան Ս. Օժտվածության երևույթը Յունգի մեկնաբանություններում, Կանթեղ գիտական հոդվ. ժողովածու, Եր., 2008, N ծ

9. Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2015,

10. Աղբյուրը՝ https; //168.am/2019/03/11/1091693.html

11. Արամ Հակոբյան, Նորայր Խրիմյան «Տրամաբանական խաղեր», Երևան,2017: